



Տեղեկատվություն դիմողների համար (1)

Պատասխանող կառավարությանը դիմումի մասին ծանուցելը

Ձեր դիմումի ընդունելիության հարցի նախնական քննությունից հետո, Դատարանը որոշել է, իր կանոնակարգի 54-րդ հոդվածի 2-րդ կետի (բ) ենթակետի համաձայն, դիմումի մասին ծանուցել կառավարությանը և հրավիրել նրան ներկայացնելու գրավոր առարկություններ ամբողջ գործի կամ ներկայացված մեկ կամ ավել գանգատների ընդունելիության վերաբերյալ և ըստ դրանց էության: Եթե ընդունվել է մասնակի որոշում, որով դիմումի մնացյալ մասը ճանաչվել է անընդունելի, ապա տվյալ գանգատ(ներ)ի քննությունը դրանով ավարտվել է, և Դուք չպետք է ներկայացնեք որևէ լրացուցիչ փաստարկներ կամ նյութեր դիմումի այդ մասի վերաբերյալ:

Դատական վիճաբանություններին նախորդող փուլը

1. Իրավաբանական ներկայացուցչությունը և իրավաբանական օգնությունը

Համաձայն Դատարանի կանոնակարգի 36-րդ հոդվածի 2-րդ ու 4-րդ կետերի՝ դատավարության այս փուլում դիմողը պետք է Դատարանում ներակայացված լինի փաստաբանի կողմից, եթե Դատարանն այլ կերպ չորոշի: Փաստաբան գտնելու դժվարություն ունենալու դեպքում, Դուք կարող եք դիմել Ձեր տեղական կամ ազգային փաստաբանների միությանը՝ փաստաբան գտնելու հարցում Ձեզ աջակցելու խնդրանքով: Փաստաբանական ծառայություններից օգտվելու համար բավարար միջոցներ չունենալու դեպքում, Դուք կարող եք դիմել Դատարանին իրավաբանական օգնության ծրագրի շրջանակներում (Դատարանի կանոնակարգի 105-րդ և հաջորդ հոդվածներ) իրավաբանական օգնություն ստանալու խնդրանքով: Սակայն, իրավաբանական օգնությունը սովորաբար տրվում է միայն փաստի ու իրավունքի բարդ հարցեր շոշափող գործերով, և ոչ թե այն գործերով, որոնք ունեն կրկնողական բնույթ: Բացի այդ, Դատարանի իրավաբանական օգնության ծրագրի շրջանակներում տրվող օգնությունը, որն իրենից ներկայացնում է միանվագ վճար, պետք է դիտվի որպես փաստաբանական ծառայությունների հետ կապված Ձեր ծախսերի միայն մի մասը հոգալու նպատակով վճարվող գումար: Վերջապես, իրավաբանական օգնություն տրամադրելը չի նշանակում, որ Դատարանը դիմողին ներկայացուցիչ է նշանակելու: Ներկայացուցիչ գտնելն ու ընտրելն ընկնում է դիմողի պատասխանատվության ներքո:

Դատական վիճաբանություններին նախորդող փուլի ընթացքում դիմողը կարող է միջնորդել իր գործը ներկայացնել ինքնուրույն: Նման միջնորդությունները հանձնվում են Բաժանմունքի նախագահի քննությանը (36-րդ հոդվածի 2-րդ կետ):

2. Բարեկամական կարգավորումը

Դատարանի կողմից Ձեզ համաձայնագիր ուղարկվելու դեպքում.

Հաշվի առնելով Դատարանի նախադեպային իրավունքը և պրակտիկան՝ սույն գործը կարող է ենթարկվել բարեկամական կարգավորման, եթե կողմերն ընդունեն կից ուղարկվող համաձայնագրի պայմանները, և եթե, մասնավորապես, Կառավարությունը դիմող(ներ)ին կատարի դրամական վճարում՝ փոխհատուցելու համար կրած վնասները կատարված ծախսերի հետ միասին:

Ձեզ խնդրվում է տասներկու շաբաթվա ընթացքում Դատարանի քարտուղարությանը տեղեկացնել, թե արդյոք Դուք ընդունում եք սույն առաջարկը: Եթե այո, ապա Դուք պետք է ուղարկեք կցված համաձայնագիրը՝ պատշաճ կարգով ստորագրված և ամսագրված: Նույն պայմաններով նամակ ուղարկվել է նաև Կառավարությանը. կից Ձեզ ուղարկվում է Կառավարությանն ուղարկված համաձայնագրի օրինակի պատճենը:

Դատարանի կողմից Ձեզ համաձայնագիր չուղարկվելու դեպքում.

Կողմերից պահանջվում է տասներկու շաբաթվա ընթացքում Դատարանի քարտուղարությանը հայտնել գործի բարեկամական կարգավորման վերաբերյալ իրենց դիրքորոշումը և ներկայացնել այդ կապակցությամբ ցանկացած առաջարկ (Կանոնակարգի 62-րդ հոդված): Եթե կողմերը շահագրգռված են գործի բարեկամական կարգավորմամբ, ապա Քարտուղարությունը պատրաստակամ կլինի կարգավորման պայմանները սահմանող առաջարկ ներկայացնել: Կառավարության կողմից ցանկացած նման առաջարկ ներկայացվելու դեպքում Ձեզ հնարավորություն կտրվի ներկայացնել պատասխան դիտողություններ: Դատարանի կանոնակարգի 62-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործի բարեկամական կարգավորման շուրջ բանակցությունները պետք է լինեն խիստ գաղտնի, և այդ կապակցությամբ ներկայացվող բոլոր փաստարկները և առաջարկները պետք է ներկայացվեն առանձին փաստաթղթով, որի բովանդակությանը չպետք է հղում կատարվի հիմնական դատավարության շրջանակներում ներկայացվող փաստարկներում:

3. Միակողմանի հայտարարությունը

Սկզբունքորեն, կողմերի միջև բարեկամական կարգավորման շուրջ բանակցությունների անհաջող ելքի դեպքում, Կառավարությունը կարող է օգտվել միակողմանի հայտարարություն անելու հնարավորությունից: Կառավարության կողմից միակողմանի հայտարարություն ներկայացնելու դեպքում՝ Դատարանը, համաձայն Կոնվենցիայի 37-րդ հոդվածի 1-ին (գ) ենթակետի, կորոշի՝ արդյոք դիմումի հետագա քննությունն արդարացված է, թե՛ ոչ: Եթե Դիմողը համաձայնվի միակողմանի հայտարարության պայմաններին, ապա Դատարանը գործը կքննի բարեկամական կարգավորման ընթացակարգի ներքո:

Դատական վիճաբանությունների փուլը

Եթե մինչև վերոնշյալ ամսաթիվը կողմերը չզան գործի բարեկամական կարգավորման, ապա գործի քննությունը կանցնի դատական վիճաբանությունների փուլին, ինչի դեպքում դիմողը Դատարանում պարտադիր պետք է ներկայացված լինի փաստաբանի կողմից՝ համաձայն Կանոնակարգի 36-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ կետերի: Գործի քննության այս փուլի ընթացքում նույնպես, ինչպես նախորդ՝ գործի կարգավորման փուլում, դիմողը կարող է Դատարան դիմել իր սեփական գործն ինքնուրույն ներկայացնելու հայցով: Ցանկացած նման հայց կհանձնվի Բաժանմունքի նախագահի քննությանը:

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ / ԳՈՐԾԻ ՆՅՈՒԹԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Խնդրում ենք նկատի ունենալ, որ գործին վերաբերող բոլոր փաստաթղթերը հրապարակային են¹, բացառությամբ բարեկամական կարգավորման գործընթացին վերաբերող փաստաթղթերի: Ավելին, որոշ փաստաթղթեր, ինչպես օրինակ՝ որոշումները, վճիռները կամ փաստերի շարադրանքը, հրապարակվում են Դատարանի համացանցային կայքում:

Չեղևաբար, գործի նյութերում պարունակվող տեղեկատվությունը, այդ թվում՝ դիմումի ձևաթուղթը և բոլոր այն փաստաթղթերը, որոնք պարբերաբար ներկայացվել են կողմերից, ինչպես նաև ցանկացած երրորդ կողմից, եթե այդպիսիք կան, մատչելի են ցանկացած անձի համար: Եթե այդ փաստաթղթերում նշվում են անուններ կամ անձնական տվյալներ, նկատի ունեցե՛ք, որ դրանք կարող են բացահայտվել, թարգմանվել և տարածվել: Գործին առնչվող նյութերի բովանդակությունը կարող է նաև հնարավոր դարձնել պարզելու այն անձանց ինքնությունը, ում անուններն այլապես ուղղակիորեն նշված չեն:

Եթե Դուք ունեք որևէ առարկություն տվյալ նյութի հանրային մատչելիության կապակցությամբ և ցանկանում եք պահանջել սահմանափակել այդ տեղեկատվությունը, ապա պետք է հնարավորինս շուտ այդ մասին տեղեկացնել Դատարանին: Նման սահմանափակումը հիմնավորելու համար Դուք պետք է հիմնավորված պատճառներ ներկայացնե՛ք: Նախագահը այնուհետև կքննի Ձեր հայցը և կորոշի՝ արդյոք գործի նյութերի հրապարակայնությունը պետք է սահմանափակվել՝ մասամբ կամ ամբողջությամբ²:

Կողմերից որևէ մեկը, որը ցանկանում է որևէ երրորդ անձի մատչելի դարձնել գործի վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն, պետք է առաջնորդվի Դատարանի տվյալների պաշտպանության կանոնադրությամբ (www.echr.coe.int/privacy), և համապատասխան ներպետական և միջազգային իրավական պարտավորություններով³:

¹ Կանոնակարգի 33-րդ և 47-րդ կետեր:

² Կանոնակարգի 33-րդ կետի 2-րդ ենթակետում նշվում է. «Որևէ փաստաթղթի կամ դրա մի մասի հրապարակայնությունը կարող է սահմանափակվել՝ ելնելով ժողովրդավարական հասարակությունում բարոյական չափանիշների, հասարակական կարգի կամ ազգային անվտանգության շահերից, երբ դա պահանջվում է անչափահասների շահերի, կողմերի կամ ցանկացած առնչվող անձի անձնական կյանքի պաշտպանության համար, կամ այնքանով, որքանով Նախագահը գտնում է, որ կա դրա խիստ անհրաժեշտությունն այնպիսի հատուկ հանգամանքներում, երբ հրապարակայնությունը կարող է ընդհարվել արդարադատության շահերին»:

³ [Անձնական տվյալների մեքենայացված մշակման հետ կապված՝ ֆիզիկական անձանց պաշտպանության մասին Եվրոպայի խորհրդի թիվ 108 կոնվենցիայի](http://www.echr.coe.int/privacy) 6-րդ հոդվածը նախատեսում է.

«Ուսայական ծագումը, քաղաքական դիրքորոշումները կամ կրոնական կամ այլ համոզմունքները բացահայտող անձնական տվյալները, ինչպես նաև առողջությանը կամ սեռական կյանքին վերաբերող անձնական տվյալները չեն կարող ավտոմատ կերպով մշակվել, եթե ներպետական օրենսդրությունը չի ապահովում համապատասխան երաշխիքներ: Նույնը վերաբերում է քրեական դատավճիռներին վերաբերող անձնական տվյալներին»: